կոտորեց Նորա կուսակիցներին, իսկ իրան Զարիքին։ որ ներուժն խնդրեց, ուղարկեց Մամուէնի մօտ, Մուհամեդ մնաց այստեղ, մինչեւ որ նա մաքրեց երկիրը Նորան սարսափի մէջ պահող ապստամբներից։

Երբ 214 թ. Մուհամեդ ի. Համիդ սպանեցաւ (Բաբեկից), Մամուէն նշանակեց Աբդուլլահ ի. Թահիրին կառավարիչ Ջաբալի, Հայաստանի եւ Ատրպատականի վերայ։ Ապա ամիրապետը դրեց Աբդուլա'լայ ի. Ահմեդ ի. Եզիդ ի. Ուսայդ Սուլամիին Հայաստանի վերայ, որ ուղեւորուեցաւ իւր պաշտօնատեղը։ Մուհամեդ ի. Իտտաբ [1], որ Ծանարաց օգնութեամբ տիրել էր Վիրքին, ճակատեցաւ Նորա հետ եւ հալածեց Նորան։ Որովհետեւ Աբդուլա'լայ պատերազմելու ոչ կարգը գիտէր եւ ոչ էլ շնորհք ունէր, ուստի Մամուէն նշանակեց (Նորա փոխարէն) Խալիդ ի. Եզիդ ի. Մազեադին. Խալիդ նախ արձակեց Իրաքում բանտարկուած իւր ազգականներին, ապա մեկնեցաւ Միջագետք, ուր Նորա հետ միացաւ Ռաբիայ ցեղից մեծ բազմութիւն։ Երբ նա Հայաստան եկաւ, խլեցուցեց Նորան ներկայացան Սավադ ի. Աբդուլհամիդ Ջահհաֆի, որին նա ներեց։ Ապա նա գնաց Դախիջեւան, որին տիրել էր Եզիդ ի. Հիսն. վերջինս փախաւ այնտեղից եւ եկաւ Կիսալ, ուր նա մնաց։ Խալիդ (պատգամ) ուղարկեց Մուհամեդ ի. Իտտաբի մօտ, որ Նորա մօտ եկաւ իրան ներելու խնդրանքը, Նորան հնազանդելու պայմանով. Խալիդ ներեց Նորան։

Խալիդ ապա արշաւեց Ծանարների դէմ, յարձակեցաւ նոցա վերայ Վիրքում, հալածեց նոցա եւ աւարի առաւ նոցա խաշինքը. յետոյ նա նոցա խաղաղութեան կոչեց՝ 3000 ձի եւ 20,000 ոչխար (իրան) տալու պայմանով։ Սակայն կարճ միջոցից

---

1 Տես վերեւ էջ 15։